

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

Redaction du journal armenien
"Hrapovunk" Vienne

VII

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ Հերկայ 1897 տարեկանի	Համակ դրամ եռայն խրկի հետեւեալ հասցեով ԽՐԱՎՈՒՆԿԻ ԵՒ ԼՐԱԳԻՐԻ ՎԱՐՆԱ (ԳՈՒԼԿԱՐԻԱ)	Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք ետ լին յրկուշիք եւ յարմար դատ ոշաներն միայն կը հրատարակ ուին ամբողջովին կամ մասամբ:
Պոչկարիոյ համար տարեկան 10 ֆր " 1/2 " 5 " Արտասահմանի համար " 12 " " 1/2 " 6 " " Կանխիկ վճարելի	Редакция на вѣстникъ „Иравункъ“ ВАРНА (България).	Ծանոցման տողը 20 սանթիւ. երեքէն աւելի անգամներու համար 20 առ 100 զեղը կը լինի:
	Rédaction du journal „Iravounk“ VARNA (Bulgarie)	

ՈՐԲԱՆՈՑՆԵՐ

Ա.

ՀԱՅԻՆ ԿՏՈՐՆ ՈՒ ԼԱԹԻՆ ՇՈՒԷՆԸ

Ամենէն կսկծազին, ամենէն թունաւոր բացատրութիւնները, որոնք սրեցին մեր առօրեայ խօսակցութիւններն ու օրուան զրէշները, որբանոցներու առթիւ Արեւմտեքի մարդասիրութեան ու գթութեան երեսին զարնուած խօսակցութիւններն ու զրուածներն եղան: Եւ զարմանալի չէ՛, քանի որ սոված էակներու և անպատասխար ստեղծուածներու առջեւ, պատասխարան, հաց, լաթ ձեռքերին բռնած, մութէն ու լոյսէն մարդիկ դուրս կելլեն:

Ո՛չ, վասն զի՝ այդ ամենուն ետին, չոր հացի սեւ կտորին, լաթի ողորմելի ծուէնին տակ, կրօնամոլ մարդկութիւն մը, արեւններու փրփուրին և աւերներու շողալիւթին մէջ, կրօնական հունձքի ելած է. և պատճառ տուաւ ըսելու թէ տարբեր ձեւի տակ տարբեր կոտորած մըն է որ կը շարունակուի ֆրիստոսի անուանով: Բնաւ ենթադրութիւն չէ աս. Պոլսէն եկած թերթերը կը գրեն յայտնապէս որ Պատրիարքարանը զիմուժ ըրած է որբանոցներու վարչութեանց, խնդրելով որ մեր տղոց դաս տրուի իրենց լեզուն, պատմութիւնն ու եկեղեցին. և ամեն կողմէ նոյն մերժողական պատասխանը, շեշտելով միայնամայն թէ ուղղողը կոշտայ, չուղղողը չի գար: Եւ ո՞ր տունն այդ պատասխանը. ճիշդ այն ժամանակ երբ ազգը, ինքզինքը կորսնցուցած՝ մարդկային պատմութեան մէջ չտեսնուած խեղճութեանց տակ, բացարձակապէս անկարող է հասնիլ անհուն պէտքերու, որոնք հազարաւոր բերաններէ օգնութիւն կը պոռան ամեն օր:

Այդ սոսկալի ամարդութիւնը, խլամին տապաւորուն ու քրդական հրացաններովը գործ դրուած շարքերէն աւելի նշանակելի է,

վասն զի բուրդը կամ թուրքը կը շարժի բռնակալութեան մը հրամանին տակ և կողոպուտի անյազ ծարաւով մը, որ սկզբնական մարդուն մէջ ամենէն ուժգին կերքն է, իսկ որբանոցներու վարչութիւնները՝ մարդասիրութեան ու գթութեան անուանովը կուգան մեզի:

Ու մեր որբերը պիտի երթան հացի կտորին ու լաթի ծուէնին ետեւէն, վասն զի անկարելի է կուրիլ փշրանքին ու բորչիլին դէմ, որ պողպատի զէնքեր են մեր բարեբարներուն ձեռքը:

Հ.

ՍՊԱՆԻԱ ԵՒ ԹՈՒՐԿԻԱ

Ճշգրտենէ չափազանց հեռուցած չէնք ըլլաւ ընդհանրով թէ մարդասպանութեան արուեստի մասին, Սպանիան թուրքիայէն հեռը երկրորդ տեղը կը բռնէ աշխարհի պատմութեան մէջ:

Այդ տարաբախտ երկիրը, հաւատաքնութեան արիւնոտ ձեռքերուն մէջ երկար ատեն թաղտուկելէ ետքը, շնորհիւ իր կըղերմիտ վարիչներուն, շնորհիւ շարք մը մեղի վեհապետներու, այսօր այնպիսի աստիճանի մը յանգած է, որ շատ ողորմելի դիրք մը կը գրաւէ եւրոպեան քաղաքականութեան մէջ. իր ճակատագիրը միշտ յանձնած անկարող վարիչներու, Սպանիան քանի մը դարերէ ի վեր սկսած է գահավիժիլ իր նախկին բարձունքէն և անտարբեր աչքով մը դիտած է իր շքեղ կալուածներուն մէկիկ մէկիկ ձեռքէն խուսափելը: Բաւ է յիշել թէ որքան անկարող գտնուեցաւ ֆուլգուի մպստամբութիւնը զսպելու, հակառակ իր վատնած մէկ միլիոնին և իր լաւագոյն զօրավարներուն և մարտավարներուն աշակցութեանը:

Արդարեւ եղբայրութիւնները որքան իրարու հետ բաղդաստուին, այնքան դուրս կը ցայտէ թուրքիոյ և Սպանիոյ ձգտումներուն նմանութիւնը:

Սպանիան, եթէ մարդ ըլլաւ, թերեւս այսօր Մեծն-Բրիտանիան գոյութիւն չէր ունենար. բայց իբր մեղի և միշտ ազգ՝ անկարող գտնուեցաւ և աւելի դեռ ինչ գործ սեպեց ամբողջ Ամերիկան ձեռքէ հանել, ինչպէս իր վիճակիցը Եւրոպիոյ և Աֆրիկէի լաւագոյն ստացուածքները:

Երկու երկիրները, ոչ թէ միայն մազի չափ չեն նպաստած քաղաքակրթութեան յառաջդիմութեան, այլ նաեւ չեն գիտցած օգտուիլ ուրիշներու գիտելիքէն և շատ անգամ՝ ալ խափանած են զանոնք:

Մէկը Մարիտանացոց պէս չարքաշ ժողովուրդ մը վանած է երկրէն դարեր առաջ, միւսը իր լաւագոյն տարրը անխնայ չարքած է և կամ՝ անյուր կեղեքուածներով և հալածանքներով ստիպած է զայն օտարութեան գրկը նետուելու: Սպանիոյ հանգեպ աշխարհ չըլլաւ համար, պէտք է յարձի թէ անիկայ պզտիկ հարուածներով անձնասպան ըլլող մըն է, մինչ թուրքիան, վայրագ մարդասպան մը՝ որ երկնքի և երկրի բոլոր օրէնքներուն ուժովը մահուան դատապարտուած է:

Արդարեւ զարմանալի միամտութեան ապացոյց մը կուտան յուր վարիչները ընդհանրապէս, երբ կը կարծեն թէ ժողովուրդները կրնան յաւիտեանս կրել անոնց գարշելի լուծը: Իրենք որ իրենց կաթնոտ կովուն՝ ճնշեալ ամբոխին վրայ այն խնամքն ալ չունին ինչ որ խղճահար ագարաւ կատէրը իր գրաստներուն, իրենք, այդ անամօթ բռնապետները, կ'ապշին ու կը զայրանան իրար ոչխար կարծուածները, վերջապէս զլուս վերցնելով, իրաւանց օրէնքը կը հռչակեն և կը յայտարարեն թէ մարդու պէս ապրիլ կուզեն, թէ ծարաւ են ազատութեան:

Եւ ինչպէս ֆուլգա մը չի կրցաւ սովալ, նոյնպէս Հայաստան մը երբէք չէր կրնար հանդուրժել զի անոր տառապանքները, ո՛հ, ալապէս շատ աւելի խոր, շատ աւելի ահաւելի էին:

Բայց ճնշեալ ժողովուրդին անհամբերութեան մէկ ճիշդ կը բաւէ՝ որպէս զի պետութեան բանակները շարժին, թնդանօթները ճամբայ ելլեն, զրահաւորները սարքուին և ամենքը մէկտեղ, վայրի խուժանն ալ իր մեծ բաժինը ունենալով, յարձակին արեան ճահիճներու մէջ խղբելու ամեն բողոք, որքան ալ արգարացի և բանաւոր ըլլայ: Ո՛չ ոք կը հարցնէ թէ ի՞նչ է ցաւը, ո՛չ ոք կը խորհի սպեղանի մը դնել վերքերուն վրայ:

Բայց ամեն բռնութիւն անօգուտ է: Պատմութիւնը վկայ է թէ բոլոր այն ազգերը որ գիտցած են յարմարեալ, կշռուած և դիւյադնական յեղափոխութեամբ մը միշտ վեր պահել իրենց սուրբ պահանջումներուն դրոշը, միշտ յաջողած են: Երէկ Պուլկարիան է որ թօթափեց իր լուծը, այսօր ֆուլգան է որ կը խզէ զինքը կաշկանդող յետին երկաթները, վաղը Հայաստանն է որ վեր պիտի կանգնի փառայից և յաղթական՝ իր միտցող աւերակներէն:

Եթէ Ռուսիոյ մէջ, ազատութեան սիրահարը Սերպիոյ սառեւուն վրայ կը նետուի, եթէ այլ և այլ երկիրներ իրենց աւելի կամ նուազ սաստիկ պատիժները ունին, Սպանիա և թուրքիա կըրնանք հաստատապէս ըսել թէ յաջողած են գթութեան իշխանի բանտերուն և աքսորավայրերուն մէջ:

Երկու երկիրներուն մէջ ալ միշտ այնպիսի հանճարներ գտնուած են որոնք, սատանի ճշմարիտ ներկայացուցիչներ, ամենէն քստմանի չարչարանքները յղացած են, որոնց քով ֆրիստոսի քաշածները մեղր ու սեր կրնան համարուիլ:

Յիշեցէք հաւատաքնութեան ահաւելի դատարանները և դատեցէք թէ ինչն էր տուկալ վարժէ Սպանիոյ ժողովուրդը որ մինչև ցայսօր անտարբեր ականատեան է կառավարութեան ամենէն հակամարդկային ընթացքներուն: Ահա նմուշ մը:

Իբր չարչարանքի նորագոյն գիւտ, Սպանիացիները երկաթ սաղաւարտ մը հնարեր են, սոնա-

կողմ մը և ուրիշ յաւելական մասերով օժտուած որոնց ամեն մէկը իր տեղը ունի։ Այսպէս, երկու ճանկեր յանցաւորին շուրթերուն կառչելով մէկը դէպ ի վեր միւսը դէպ ի վար կը քաշեն լինտերը՝ ճաթեցնելու աստիճան, և այս միջոցին արուեստական խողովակ մը կը մուծուի թոքերուն մէջ։ Կողմնակի երկու տարբեր մասեր ալ յարատեւ կը ճնշեն գլուխը, զայն ճմլելու աստիճան...

Փալով մեր կրած չարչարանքներուն, անոնք այնքան աներեւաւ կայելի, անգուլթ և զարհուրելի են, մէկ բառով, այնքան թրքաւան են, որ մարդս երբ զանոնք կը յիշէ անդիմադրելի բարկութեանէն ամբողջ մարմնովը կը գողգոջայ և անհուն կակիծէ՝ կը զգայ թէ տաք արցունքներ իր աչքերը կը թրջեն...

Բայց համբերութիւն, աշխարհը դահիճներուն չի կրնար ըլլալ, բոլոր բռնապետները վաղ կամ անագան պիտի փճանան։ Իսկ Սպանիան և թուրքիան ամենէն առաջի գծին վրայ են, ամենուն նախակարգաւոր հանդիսանալու փառասիրութենէ բռնուած են կարծես։ Մէկը՝ տակաւ առ տակաւ, հիւժախտաւորի մը պէս կը մարի, կիջնայ՝ ինչպէս արեւը երկնից վրայ։ Իսկ միւսը՝ ա՛յն միւսը, անոր անկումը գահավիժային է։ Խօսական յորձանք մըն է որ շառաչելով, փրկարարով ժայռէ ժայռ կոտտէ, իրեն նպատակակէտ դրած՝ անել անդունդը։

Գրանկ-Արշալիր

ՄԵՐ ԿԱՐՕՏԵԱԼՆԵՐԸ

Օրերորդ Ֆրայդըրիկ նպաստի գործը դադարէն ի վեր իրը քսանը-հինգ օր է ու վառնաի հայ գաղթականութեան ամենակարօտ դատակարգը սոսկալի թշուառութեան մը մատնուած։ Այսօր պահ մը մտածելու ենք թէ նպաստի դադարէն ի վեր ինչ կընեն այդ խեղճերը, ինչպէ՞ս կապրին և ինչ պիտի ընեն։

7-8 ամիսներէ ի վեր երբ հայ կարօտեալները փոխանակ տունէ տուն և խանութէ խանութ դիմելու միահաղոյն կերթային ափ կառնէին Օրերորդ Ֆրայդըրիկ դուռը և մեզի հանգիստ ձգած էին, մենէ ո՛չ ոք կրցած էր հասկնալ ախրող թշուառութեան մեծութիւնը, մինչ այժմ, երբ ամեն բան դադարած է և շուրջերեսիս ամենուրեք աղքատութիւն սփռուած կը տեսնենք, չենք կրնար չըսել «Երանի՛ թէ ա՛յ աւելի երկարած գուէր նպաստը ինչ կերպով որ ալ ըլլար, գո՛նէ աղքատը պատառ մը հաց կը գտնէր»։

Հիմակ անթութեանէ տոգոյն, թշուառութենէ կծկծուած և վաղորդայնի մտածումովը պաշար-

ուած դէմքեր ուրուականի նման կը շրջալին փողոցներու մէջ։ Տեսանք արցունքի և հեծկտուքի մէջ խեղդուած կիներ որոնք կիսաբաց դուռներու ծերպերէն ներս կը սուզուին «Հայ ենք, անթի ենք» կըսեն և խնամով կը քակեն քուրջի մը մէջ ծրարուած խել մը տնական իրեղէններ, գործածուած պատուաքաղ, դանակ, դգալ, կամ քանի մը պնակներ և այլն ու թախանձանքով կը ստիպեն որ տնեցիք գնեն զանոնք, որպէս զի իրենք ալ հացի մը փարօտ ճարեն։

Տեսանք դարձեալ մայրեր կամ կիներ որոնք մէկ մէկ պլտիկներու ձեռքէն բռնած աստ անդ կը թափառէին և ողորմութիւն տալու տրամադիր մէկը տեսնալուն պէս նախ ինքզինքնին տան մը կամ ծառի մը ետին կը ծածկէին և բռնի առաջ կը մղէին իրենց ընկերացող փոքրիկները որ երթան, սրտեր յուզին, ձեռքերն իրանան և մուրան...

Ասոնք իմ տեսածներս են։ Ո՛գիտէ՞ դու ինչ միջոցներ կը գործադրուին հացի կտոր մը ճարելու համար։

Արդ, մենք ունինք, ինչպէս ամեն տեղ, վառնաի մէջ ալ վաճառականներ, կամքի և գիրքի տէր անձեր որոնք շատ բան կրնան ընել, եթէ ուզեն։

Մեր ազգին յատկանիշը եղող կուսակցական խնդիրները, իրարու դէմ քէնը, անտի հակառակութիւնները, բանակիւնները այնքան ժամապաճառ կընեն զիրենք որ կը մոռնան թէ անդին անթութեան տառապող կայ, մեռնող կայ։

Ճիշդ ժամանակն է սակայն որ այս կործանարար կիրքերը մէկգի նետենք ու ձեռք ձեռքի տալով լրջօրէն խորհինք միւս աղքատներուն վրայ, չձգելու համար որ անթութիւնը և մահը ամբողջացնեն հաւաքածքի, զրկանքի և տառապանքի մատնուած զոհերուն ճակատագիրը։ Հայ ծնած և հայ ապրած քոյրեր ու եղբայրներ ունինք որոնք մենէ՛ ամեն բանէ աւելի, հաց կուզեն, ամենէն աժան և ամենէն աւելի կարեւոր բանը. գոնէ այս տանք։

Չըսենք երբեք որ այդ կարօտեալները կուռուսէր, ապերախտ և անարժաններ եղան. եթէ եղան իսկ գոնէ մտածենք որ հայ են և մարդ են։

Անթութիւնը և վիճակի անստուգութիւնը մարդուն ուղեղային և ընդհանուր կազմուածքի հաւասարակշռութիւնը այնքան վեր ի վայր կը յեղաշրջեն որ կարող կընեն մարդը նոյն իսկ ոճրագործ, գող և գաղան ըլլալու. մեր ձեռքն է զանոնք այդ ծայրայեղութիւններէն ազատելը։

Մտածեցէք անոնց վրայ, բարեկեցիկ հայեր, դուք որ օրուան մէջ տաք կերակուր մը ուտելու բախտն ունիք, մտածեցէք ձեր անթի և մերկ աղգակիցներ

րուն վրայ որոնք աշխատելու գործ չեն կրնար գտնել այս օտար հողին վրայ և պանդխտութեան մէջ՝ յուսահատ հոս հոն կը թափառին պատառ մը հացի կարօտով։

Օգնենք անոնց, չթողունք որ անթի մնան, չթողունք որ մեր կիները դռնէ դուռ պտըտելով հացի մը փարօտ ճարելու համար օտարներու ոմանց գուլթը և ոմանց ալ արհամարհանքը ծանրացնեն իրենց վրայ։ չթողունք որ մեր զուտկները մ'ւրալու սկսին ու մուրալ սորվին. ասիկա ամենէն սոսկալին է։

Վերջապէս խնայինք մեր կարօտներուն. աղքատախնամ ընկերութիւն մը ունինք ի վառնա նիւթապէս տկար ու թոյլ վիճակի մէջ. զօրացնենք զայն նոր և լաւագոյն տարբերով և այսպէս գոնէ կատարած ըլլանք մէկ շնչին մասը մեր այն բաղմամբի պարտականութիւններուն զորս ունինք իրրեւ հայ և իրրեւ ազատութեան տնեցացող ազգի մը անհասները։

Արշալիր

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

Կ. Պոլիս, 12 Յունիս

Ժամանակ մը անգործ անցնելէ ետք՝ Սահմանադրութեան վերաբնութեան Յանձնաժողովը հիմա վերստին կենդանութեան նշաններ ցոյց կուտայ նիստեր ընելով։ Թէ ինչ եղած է և տակաւին ինչ պիտի ըլլայ իր աշխատութեանց արդիւնքը, դեռ որոշապէս չգիտցուի, որովհետեւ Յանձնաժողովը առ այժմ՝ դադարի կը պահէ իր որոշումները, որոնք ժողովրդին փափաքներուն շատ համաձայն չեն հաւանականաբար, վերաբնութիւնը ուղղակի եւրոպէի մէկ պահանջը ըլլալով։ Շիտակը խօսելով ժողովուրդն ալ անտարբեր կիւրեւայ վերաբնութեան գործի մասին, թէեւ սա ինքնին կրնայ մեծ կարեւորութիւն ունենալ ապագային մէջ մեր ազգային գործերուն համար. այս անտարբերութեան պատճառը կեանքի նիւթական պէտքերու հայթայթումն է, ապրուստի խնդիրն է, որ երթալով կը դժուարանայ թէ՛ այստեղ և թէ՛ գաւառները և ուրիշ բանի վրայ խորհելու շատ ժամանակ չի ձգեր խեղճ ժողովուրդին։ Շատ շատ փակուած դպրոցները վերաբանալու, եկեղեցիները վերանորոգելու և որբերը խնամելու համար գաւառացի հայը ճիգեր կընէ որքան կը թոյլատրեն իրեն իր այժմեան անկեալ ուժերը։ Այս երեք բաններէն զատ ուրիշ խնդիրներ յուզելու բնաւ տրամադրութիւն չունի։

Որքերու խնդիրը նոր շաղի մը մէջ մանկու վրայ է. տեսնելով որ

տեղ տեղ միսիօնարները բացկ բաց կը մերժեն իրենց խնամոց յանձնուած փոքրիկներուն սորվեցնել հայերէն լեզուն, ազգային պատմութիւն և Հայաստանայցեկեղեցւոյ դաւանանքն ու ծէսերը, գաւառները ստիպուեցան իրենց զուտկներու մէկ մասը գոնէ օտարանալու վտանգէն ազատելու համար միջոց մը մտածել. ասկէ առաջ եկաւ վանքերը որբանոցի վերածելու գաղափարը, որ հետոյ հետէ կընդհանրանայ և տեղ տեղ գործադրուելու ալ սկսած է։

Քաղաքական ժողովը Դրան հետ յարաբերութեանց խնդրով միայն կը զբաղի, որոյ դժուարութիւններուն յաղթելու չեն բաւեր ժողովին Ստանապոլին քաղաքագետի բոլոր տողանդը. սակայն չկարծուի որ այդ խնդիրները ուղղակի ազգին կենսական շահերը չօշափող, ծանրակշիռ գործեր կը պարունակեն, զորս ժողովը կարգադրել չանայ յօգուտ մեր։ Ոչ. Դուռը մասնաւոր դիտումներով ամենէն աննշան գործերու մէջ ալ դժուարութիւններ կը յարուցանէ Պատրիարքարանը դրաղեցնելու համար, որպէս զի կարգ իսկ չգայ կարգադրելու մեր շահերուն տեսակետով աւագ կարեւորութիւն ունեցող գործեր, որոնք կարօտ են կառավարութեան հաւանութեան կամ բարեացակամ դիրքին։

Պօլսոյ նայ լայնք մեծ դուռը, ճութեան մէջ էր քան պարի և հաց կերոյթի հանգէսներու պատճառաւ, զոր անգլիական զեսպանատունը տուաւ վիճիթորիա թագուհիին վաթսուամեայ գահակալութեան յորէլուանին առթիւ։ Երբ որոշալ ժամուն Սըր Ֆիլիբ Քըրրի տիկին Նէլիսօֆի հետ պարտահանգէսը կը բանայ, Ֆրանսացի մը կըսէ իր մօտ գտնուող հայ հանգիստականի մը։

—Անգլիական զեսպանն ու Ռուսական զեսպանուհին հայ և յոյն գանկերու վրայ կը պարեն. ահաւոր զոհ մը պէտք էր որ այս յորէլուանը այսպէս կատարուէր խաղաղութեան մէջ։ Արեւելքի քրիստոնեաները եղան այդ զոհը։

Քիչ մնաց որ Ն. Բրիտանական վեհապետութեան գահակալութեան հանգէսը արիւնհեղութեամբ տօնուէր մեր քաղաքին մէջ։ Դեռ պանատան հրախաղերուն պայթման աղմուկը գիշեր ժամանակ են, թաղերէլ տուաւ իսլամ տգէտ ամբոխին թէ գարձեալ կեալուրները խռովութիւն մը յարուցած են։ Քաղաքին զանազան կողմեր բիւրաւոր թուրքեր և քրիստոնեաներ են և խանութէ դուրս թափուեցան և կը պատրաստուէին սկսիլ ջարդը, սակայն ոստիկանութիւնը յաջողեցաւ զանոնք ցրուել, բացատրելով իրենց՝ խռած պայթուցիկներուն պատճառը։

...

Զուրիս, 20 Յունիս
Մեր ազգին վաղուց ի վրէ և
մանաւանդ վերջին ժամանակներս
կրած հարուածին հետեւանօք,
տեսանք թէ ինչպէս եւրոպական
սմէն հրկրի ժողովուրդ տւելի
կամ նուազ իր կարեկցութիւնն ու
համակրանքն յայտնեց այն տա-
րարախտ հայերուն որոնք տարի-
ներու երկար ընթացքին մէջ ի-
րենց շինած սարքած հարստու-
թեանն ըրտութեամբ գրկուելով
ստիպուած էին օտար երկիրներ
գաղթել, գոնէ իրենց քով մնա-
ցած միակ թանկագին բանն ա-
զատելու համար. իրենց գոյու-
թիւնը:

Այսօրինակ յուսահատական ու
զառն կ'ընթերցան մը մէջ, զըտ-
նուցան վեհանքն ու բարեացա-
կամ մարգրիկ օր իրօր անցան, ժողո-
վրդային գոլթը շարժեցին մեզ
հանգէպ, մարմիններ կազմեցին,
մասնախումբեր յօրինեցին անմի-
ջական նպատակ հասցնելու համար
գաղթական թշուառ հայերու,
օտար հողի վրայ:

Ֆրանսա, Անգլիա, Զուիցիեր
և Յունաստան անձամբ այցելով
մտնէն գիտեցի այդ մարդասիրա-
կան գործերը: Այժմ պիտի խօ-
սիմ Զուիցիերի Զուրիս քաղա-
քի հայանպատ մարմինն վրայ
որ այնչափ անձնութեամբ գոր-
ծած է ու կը գործէ, անօրինու-
թեամբ տեղույս նշանաւոր եկե-
ղեցական—բարոգիչներէն Ֆուրը-
քը հովիւն. քանձապատն ու
քարտուղարն է Պ. Շօլտէր—Տե-
վելյոյը:

Այս պատուական անձերը պահ
մը իսկ չեն գաղթած սիրելի հա-
յուկները անհուն գործով: Ա-
ռաշինը իր քարոզած բոլոր եկե-
ղեցիներուն մէջ հայկական դա-
տին յաջողութեանը համար ժո-
ղովրդեան ազօթքը կը խնդրէ
միշտ ու երկրորդը հակառակ իր
յառաջացած տարիքին ու մարմ-
նին տկարութեանը գիշեր ցորեկ
գրեւթ ձեռքը լրագիրներուն յօ-
դուածներ կը գրէ, պրօշխրներ
և նոյն իսկ գրքեր կը հրատա-
րակէ. բոլորովին հայրական զը-
թովութեամբ վարուած են Զուի-
ցիերի այդ գաղթական հայերուն հետ
և օտար երկրի նպաստի մասնա-
խումբերուն ալ ի հարկին օգնած
են:

Դեռ երկու օր առաջ այցելու-
թիւն տալով Պ. Շօլտէր—Տեվել-
յոյի, տեսայ որ լուսանկարի ծը-
րար մը բանալով ինչի ցոյց տը-
ւաւ զանազան լուսանկարներ, ի
մէջ այլոց վառնա գաղթող հա-
յերուն, որոնց թշուառութեան
համար մեծ վիշտ կը գար: Տակա-
ւին երկու օր առաջ գործած էր
Գերմանիայէ ուր գացած էր գա-
րուանել իր առողջութիւնը. հիմա
զբաղած էր երկար նամակ մը
գրելու վառնաի տարարախտ հա-
յերուն մօտին, հակառակ իր ըն-
տանիքի թախանձանքին, որ կը

խնդրէր իրմէ մէկ քանի օր հան-
գիստ առնել:

Օտարներու կողմէ այսքան
անձնուէր չանք և զոհողութիւն
տեսնելով, արդարեւ մենք մի-
այս ու վեպ վիճակին մէջ գոնէ
լստրոյական միջոցաւ մը ու
քաջապետութիւն մը կը գտնեք, մը-
տածելով որ եթէ մէկ կողմէ չա-
րաչար կը հալածուինք, միւս
կողմէ մարդկութեան գթութիւն
ու իր տաք համակրութիւնը կը
տարածէ մեր վրայ: Գ. Ա.

ՔԱՂՈՒԱՐ

Նոր—Դարի մէջ կը կարդանք.
Նապօլէոնին հարցրին թէ պատե-
րազմին համար ի՞նչ է հարկաւոր:

—Փող, պատասխանեց մեծ կորսի-
կացին:

—Յետոյ էլի ի՞նչ:

—Յետոյ էլի փող, դարձեալ փող:

Նոյնը կարելի է ասել և պարբերա-
կան թերթի հրատարակութեան վե-
րաբերութեամբ:

Ամենօրեայ թերթ հրատարակելու,
թերթը հետաքրքիր, բազմաբովան-
դակ դարձնելու, ընտիր աշխատա-
կիցներ, շնորհալի թղթակիցներ պա-
հելու համար փող է հարկաւոր, ամեն
օր փող, ամեն օր ծախսելու, ան-
ընդհատ ծախսելու պայմանով:

Այդ բանին չեն ուզում հաւատալ
հայոց թերթի ընթերցողները: Շատե-
րը կարծում են, որ թերթ հրատա-
րակելը մի շատ համարակ և գիւրդին
գործ է, ծախք էլ շատ չի նստիլ.
չեն իմանում, որ համար լոյս հանե-
լու համար միջին հաշուով օրական
50—60 բուլբլ է հարկաւոր, բացի
անպատկառ և արտակարգ ծախքե-
րից:

Հայերի մէջ դեռ այն կարծիքն է
տիրապետողը, որ թերթ կարգաւոր
համար վճարի հարկ չկայ. տպած
թուղթ է՝ տոն չէ, ձմեռուկ չէ որ
փող վճարուի:

Այդ պատճառով հայերը դժուարու-
թեամբ են թերթ ստանում և եթէ
ստանում են, աւելի դժուարութեամբ
են վճարում բաժնորդագինը:

Բացի այդ մի ուրիշ և տգեղ բան
էլ կայ:

Հայերի մէջ թերթին մի որեւէ
զուտաւ կտակելու սովորութիւնը դեռ
չէ մտած, իսկ թերթին հասանելի
զուտարներն կլանելու սովորութիւնը
վաղուց է մտել և ընդունուել:

Թերթի բաժանորդագինը ուտել,
ուրանալ, մոռնալ և չվճարել այդ ի-
րեն կարգով, թերթին հասանելի
զուտարները մի կերպ ձեռք ձգել և
կլանել այդ էլ իւր կարգով:

Սա, կարծում ենք, շատ ցաւալի
գրութիւն է, և ամենեւին մեր ա-
ռաջագիտութեան, ազգային գիտակ-
ցութեան ապացոյց չէ:

Գուցէ մեզ ասեն թէ՛ սա ի՞նչ բան
է. փողից ենք խօսում. դա մասնա-
ւոր գործ է, խմբագրութեան մաս-
նաւոր գործն է:

Չէ՛, կը պատասխանենք մենք. սա
ընդհանուր և ամենքին վերաբերող
գործ է, որովհետեւ այդ խնդրի հետ
կապուած է և մամուլի զարգացման,
տարածման գործը:

Պէտք է վերջապէս ընդհանրապէս
այն միտքը թէ թերթին հասանելի
փող կլանելը—գողութիւն է և այն
էլ վատ տեսակի գողութիւն:

Թաղական խորհուրդս կը փու-
թայ իւր շնորհակալքեմ յայտնել
Քէօսթէնճէի և շրջակայ գիւղո-
րէից մէջ գտնուող ազգայնոց, ու
րոյ Ս. Ծննդեան և Ս. Զատիկի
խաղաղոյնուէրներով խորհուրդս
կըցաւ գոյեւ անցեալ տարի եկե-
ղեցոյ նորոգութեանն գոյացեալ
2,000 Փրանքի պարտքը:

Եկեղեցւոյս և վարժարանիս մա-
տակարարութեան համար մասնա-
ւոր եկամուտ մը չըլլալով, մանա-
ւանդ որ վարժարան յաճախող ա-
շակերտներէ ամաթոշակ առնելու
սովորութիւն չկայ, Թաղ. խոր-
հուրդս ցարդ իւղազնէ գոյացեալ
հասութիւնը կը հաւասարակշռէր
ծախուց պիւտճէն. Սակայն, ներ-
կայ տարւոյ հասութիւն անտուկին
հին պարտքը վճարուելով խոր-
հուրդս զրկուեցաւ պատրաստի ու-
նենալէ գումար մը՝ ուրիշ կարե-
նար փակել ամիս ամիս գոյացեալ
բացը:

Արդ՝ Թաղ. խորհուրդս կը հրա-
ւիրէ տեղւոյս ա՛յն ազգայիններն
որք՝ դեռ չեն մասնակցած իւղա-
զնոյ հանգանակութեան, բարե-
հաճին յղել առ մեզ իրենց սիրա-
յօժար նուէրներն:

Խորհուրդս շնորհակալութիւն
կը յայտնէ միանգամայն առ Տիար
Սարգիս Մեսրոպեան որ բարե-
հաճած է նուիրել մէկ օսմ. ոսկի
փոխան ծաղկէպսակի, Տիար Յա-
կոբ Թովմասեանի վաղամեռիկ
որդւոյն մահուան առթիւ:

Ի գիմաց Թաղ. խորհրդոյ
Քէօսթէնճէի
Ատենագիր Ատենագետ
Լ. Սեդրուհեան Տ. Սեմէյեան
12 Յունիս 1897
Քէօսթէնճէ

ՀՐԱՏԱՐԱՆՈՒԵՑՈՒ ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ ՎԱՄ

ՄԻՄՈՒՆՉ ՀԱՅԱՍՏԱՆ
Սոյն Երգարանը որ կը բաղկա-
նայ առաւել քան 100 երեսէ, կը
պարունակէ շատ մը հին և նոր ա-
զատ երգեր, զորս այժմ ժողովուրդն
տխրութեամբ կ'երգէ:

Փափաքողք կրնան ստանալ պոյն՝
փոխարէնը 1 Փրանքի նուազագոյն
(բօստի բուլ) խրկելով խմբագրու-
թեանս, կամ դիմելով հետնեալ
հասցէներուն:

Նկար
Արիս Գուրպէթ. Ռուսնուգ
Տիգրան Աճէմեան Շուվու
Կարապետ Թօրապալ. Սիլիտրէ
Մարտիրոս Քէնտիկեան Պուրկազ
Խաչիկ Թօհաֆճեան Սիլվէն
Ալէքս. Տէմիրճիպլ. Ֆիլիպէ
Իսկէնտէր Արսլանեան Տօպրի
Յովհաննէս Պիպէճեան Պուրթշ
Արթ. Տէր Ղեւոնդ քճնյ. Կալաք
Թէօֆիլ Թէրզեան Քէօսթէնճէ
Ասատուր Բրուսեան Գահիթէ
Տիգրան Արսլանեան Աղէքսանտրիա
Սիլվ. վարժարանաց համար՝ երբ
գէթ 10 հատ կ'ուզուի, 20 առ 100
զեղչ կը լինի:

ՍԹԱՆՊՈԼՏԱ ՀԵՑԷՃԱՆ

Սթանպոլ լիմանընտա պու-
լընան ինկիլիզ մայթթ վարօրարը
վէ թիւճարիյէ վէ սայիր ինկիլ-
թէրա պանտէրարը համիլ օլան
սէֆինէլէր՝ Գրալիցա վիզվօրիա-
նըն ճիւլիւսինին ալթմըշնըն սէ-
նէի տէվրիյէսի օլմագ մինասի-
պէթի իլէ կէշէն սալը ազշամը,
պիրտէն պիրէ թօբլար ֆիշէնկէր
վէ գուճպարալար աթմաղա պաշ-
լատըզլարընտան, էհալիտէ նա-
կեահան պիր հէյէճան պիր տէհ-
շէթ հուսուլա կէլմիշ՝ Սթանպոլ
վէ Ղալթատա ալըգ պուլընան
մաղաղալար վէ տիւքեանլար տէր-
հալ գարանուպ հէրքէս գաշմայա
պաշլամըշ տըր: Պիր չօգ թիւրք-
լէր իսէ ինկիլիզ Սթանպոլը թօ-
բա թովթըյօր տէյուպ, տէլիկ-
տէն տէլիկէ կիւմիշ վէ տիկէր
թարաֆտան եաղմաճը վէ սօբաճը
ալայը մէյտանա չըգմըշ իսէտէ,
ազ միւտտէթ զարֆընտա իշին
հագըգաթը հիւքիւմէթ թարա-
ֆընտան պիւտիլիլուպ, բօլիպէր
վասիթասը իլէ սօբաճըլար տա-
ղըտըմըշ տըր: Իշպու հէյէճան
տա պաղըլար ալթալթընա կիթ-
միշ վէ պաղըլար տախի գօրգու-
տան պալըմըշ տըր:

Պու իշտէ էն զիյատէ գօրգան
Երալը խալը օլմալը տըր քի,
պիլալիէրէ՝ էվվէտէն հիւքիւմէ-
թէ խապար վէլիւմէքսիլին ին-
կիլիզ գարիտանլարըն թօբլար վէ
գուճպարալար աթմաղա պաշլա-
մըշ օլմալարընա գարըշ հիւքիւ-
մէթ բրօթէսթ իթմիշ տիր:

ՄԻԻԹԷՆԷՎ ՎԻԷ

Յունիս 14 թարիխի Գանատան
չէքիլէն պիր թէլէկրաֆ աթիտէքի
մալիւմաթը վէրմըշ տիր:

Կիրիտէ ժանտարմալար վէ բօ-
լիպէր թէշքիլ ու թալինի խու-
սուընտա թիւրք վէ էվրօրալը
հիւքիւմէթլէր պէյնինտէ միւշքի-
լաթ վէ զըտտիյէթ հուսուլա կէլ-
միշ տիր:

Թիւրք էվլէրինի թահարրի իլէ
սիւահարը թօբլանըմալընա գար-
շը իսլամլար չէտիտէն բրօթէսթ
իտէրէք, «էվրօբա ասըլարը մու-
հաֆազա խոուպ, թիւրքլէրի
թաղլիգ իտէյօր» տէմէքտէ տիր-
լէր:

Թիւրք վէ Եունան մուսալէհէ-
սի իշիւն թահտիտի սինօր մէսէ-
լէսինտէ՝ Պապը Ալի սինօրըն
Սալամօվինա—Հէրիտան Թըր-
նօվօսա գատար թէմտիտ օլըն-
մասըն իտտաա իթմէքտէ իմիշ:

Բրուսիանըն էսկի զապիթան-
տանտան Չէքլ՝ բաշա Սթանպոլ
ճիւլարընտա պիր մահէլտէ էօլմիւշ
պուլընտը. մէրգուճ գաստէն էօլ-
տիւրիւվիշ իսէտէ, գալթիլ պու-
լընամամըշ տըր:

